ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«03» 09 2025 թ.
№ ԿԱՊՇ/1395

«ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի տնօրեն
Դ. Մնացականյանին
ՀՎՀՀ 00170838
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թղմ., շ. 32/4
հեռ. 094-121-112
էլ. հասցեն՝ erodavllc@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն որոշ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 30.06.2025թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-25-1/5-5 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Էդվարդի Մնացականյանին է պատկանում «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ն (ՀՎՀՀ՝ 25295761), որը 2024 թվականի հունվարի 26-ից մինչև 2026 թվականի հունվարի 26-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այս առումով «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերության և «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար Պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 30.06.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-1/5-5 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. սեպտեմբերի 3-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 2 284 400 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարը, ապա «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2025թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի ապահովման գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա՝ պայմանագրի ապահովման գումարը գանձելու ուղղությամբ:

Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 30.06.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-1/5-5 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերով և քանակներով ապրանքներ ձեռքբերելու դեպքում «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ